ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«24» մայիս 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետի

տեղակալ _____ Հ. Այունց

ՍՑ-ԳԲԽ-17/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.03.2016թ. թիվ 1/73-1/8897-16 գրությամբ ներկայացված «Ամբասադոր» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00466758) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մոնթե Մելքոնյանի անվան թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 13.11.2015թ. թիվ 1211 գրության հիման վրա, 25.11.2015թ. թիվ 1/73-1/36717-15 գրությամբ, դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Ամբասադոր» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու համար:

Կենտրոնը 10.03.2016թ. թիվ 01/04.1/849-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 25.11.2015թ. թիվ 1/73-1/36717-15 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է «Ամբասադոր» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միաժամանակ Կենտրոնը հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից ***մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտել է, որ խախտումը թույլ տալու պահից (04.11.2015թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «Ամբասադոր» ՍՊԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Միաժամանակ նույն գրությամբ Կենտրոնը խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտում թույլ տված մասնակցի անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված մրցակցային գնման

ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված մասնակցի կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

Սակայն ՀՀ ֆինանսների նախարարությունը, 10.03.2016թ. թիվ 1/73-1/8897-16 գրությամբ վկայակոչելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 124-րդ կետի 2-րդ ենթակետը, Կենտրոնին հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «Ամբասադոր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Ամբասադոր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 23.12.2015թ. թիվ 01/04.1/3851-16 գրությամբ դիմել է «Ամբասադոր» ՍՊԸ-ին, սակայն Ընկերության կողմից կարծիք չի ներկայացվել:

«Ամբասադոր» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 15.04.2016թ. ժամը 17:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-17/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Երևանի Մոնթե Մելքոնյանի անվան թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Երևանի Մոնթե Մելքոնյանի անվան թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը 13.11.2015թ. թիվ 1211 գրությամբ ներկայացրել է «ԵՄՄԱՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Միևնույն ժամանակ, Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կարիքների համար համակարգիչների, համակարգչային և տպիչ սարքավորումների, ինչպես նաև օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով Պատվիրատուի կողմից կազմակերպվել է Ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ամբասադոր» ՍՊԸ-ն: Հայտերի բացման նիստում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընկերությանը ճանաչել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման նպատակով Պատվիրատուն հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարությանը և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությունը՝ Պատվիրատուն Ընկերության կողմից ներկայացված տվյալները դիտարկել է իրականությանը չհամապատասխանող:

4. ՍՑ-ԳԲԽ-17/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 10.03.2016թ. թիվ 1/73-1/8897-16 գրությամբ ներկայացված «Ամբասադոր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի Մոնթե Մելքոնյանի անվան թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար համակարգիչների, համակարգչային և տպիչ սարքավորումների, ինչպես նաև օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՄՄԱՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով «Ամբասադոր» ՍՊԸ-ն ***04.11.2015թ.*** հայտ է ներկայացրել:

2. Ընկերությունը հայտի N 3.4 հավելվածով հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:***

3. Ընկերությունը հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը հինգ չափաբաժինների համար կազմել է՝ 924 000 ՀՀ դրամ (1-ին չափաբաժին), 191 400 ՀՀ դրամ (2-րդ չափաբաժին), 184 800 ՀՀ դրամ (3-րդ չափաբաժին), 39600 (4-րդ չափաբաժին), 3564 ՀՀ դրամ (5-րդ չափաբաժին):

4. Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Ամբասադոր» ՍՊԸ-ի վերաբերյալ:

5. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.11.2015թ. Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի ***«Ամբասադոր» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելուն (04.11.2015թ.) նախորդող երեք հաշվետու տարիների (2012թ., 2013թ., 2014թ.) համախառն եկամուտ չի ունեցել:***

6. Կենտրոնը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.03.2016թ. թիվ 01/04.1/849-16 գրությամբ արձանագրել է «Ամբասադոր» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը և խնդրել ՀՀ ֆինանսների նախարարությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտում թույլ տված մասնակցի անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված մասնակցի կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

7. ՀՀ ֆինանսների նախարարությունը 10.03.2016թ. թիվ 1/73-1/8897-16 գրությամբ վկայակոչել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետը և հայտնել, որ անհրաժեշտ է նախաձեռնել «Ամբասադոր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

5. ՍՑ-ԳԲԽ-17/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.03.2016թ. թիվ 1/73-1/8897-16 գրությունը, «Երևանի Մոնթե Մելքոնյանի անվան թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը 13.11.2015թ. թիվ 1211 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:***

«Երևանի Մոնթե Մելքոնյանի անվան թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԵՄՄԱՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/1» ծածկագրով շրջանակային համաձայնագ-րերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով «Ամբասադոր» ՍՊԸ-ն 04.11.2015թ. հայտ է ներկայացրել:

Ընկերությունը հայտի N 3.4 հավելվածով հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Ամբասադոր» ՍՊԸ-ի վերաբերյալ:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.11.2015թ. Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի ***«Ամբասադոր» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելուն (04.11.2015թ.) նախորդող երեք հաշվետու տարիների (2012թ., 2013թ., 2014թ.) համախառն եկամուտ չի ունեցել:***

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ «Ամբասադոր» ՍՊԸ-ի կողմից 04.11.2015թ. հայտի N 3.4 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի

«բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **<u>հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում</u> գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից գնման գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Ամբասադոր» ՍՊԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում վերջինս մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Այսպիսով, Կենտրոնը արձանագրում է, որ «Ամբասադոր» ՍՊԸ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է՝ ***Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող***

խախտման առկայությունը, սակայն Ընկերությանը Ցուցակում ներառելու մասին որոշումը կարող է կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ ***խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքի*** ի հայտ գալու պայմաններում: Մինչդեռ մինչև վերոհիշյալ եզրակացությունը ՍՑ-ԳԲԽ-17/16 բողոքը քննող հանձնաժողովին տրամադրելը՝ ***Կենտրոնը չունի որևէ տեղեկատվություն Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից (04.11.2015թ.) մեկ տարվա ընթացքում գնման որևէ գործընթացին հայտ ներկայացրած լինելու վերաբերյալ:***

Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից (04.11.2015թ.) մեկ տարվա ընթացքում գնման որևէ գործընթացին հայտ ներկայացրած լինելու վերաբերյալ տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով Կենտրոնը ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված 10.03.2016թ. թիվ 01/04.1/849-16 գրությամբ, արձանագրելով «Ամբասադոր» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը, խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը Ընկերության անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված մրցակցային գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված Ընկերության կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

Սակայն ՀՀ ֆինանսների նախարարությունը 10.03.2016թ. թիվ 1/73-1/8897-16 գրությամբ վկայակոչել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 124-րդ կետը և հայտնել, որ անհրաժեշտ է նախաձեռնել «Ամբասադոր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կենտրոնի սույն եզրակացությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին տրամադրելու օրվա դրությամբ առկա չէ որևէ

տեղեկատվություն «Ամբասադոր» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 04.11.2015թ.-ից հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, ինչը հանդիսանում է մասնակցին Ցուցակում ներառելու մասին որոշում կայացնելու համար երկրորդ պարտադիր պայմանը, առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 10.03.2016թ. թիվ 1/73-1/8897-16 գրությամբ նախաձեռնած «Ամբասադոր» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00466758) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-17/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան